

ՍԱՐԴԱՐԱԲԱԴԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԶԲՈՍԱՅԳԻ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Մայիսի 25-ին, շաբաթ օրը, Հոկտեմբերյանի շրջանում հանդիսավորապես կատարվեց Սարդարաբադի հերոսամարտի հիշատակին կոթողացված զբոսայգի-հուշարձանի բացումը:

Մայիսյան այդ արևոտ օրը Սարդարաբադի հերոսամարտի վայրում էին հավաքվել բազմահազար ուխտավորներ, որոնք հոսել-եկել էին Հայաստանի տարբեր ծայրերից՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու 1918 թ. մայիսի 22-ից 26-ի մարտերում քաջաբար ընկած հերոսների հիշատակին:

Բացումը կատարվում է ժամը 11-ին: Բեմահարթակ են բարձրանում Սովետական Հայաստանի ղեկավարները, արդյունաբերության ու գյուղատնտեսության առաջավորներ, հայ արվեստի ու գրականության մշակներ, Սարդարաբադի հերոսամարտի մասնակիցներ:

Նվագախումբը կատարում է ՍՍՀ Միության և Հայկական ՍՍՀ պետական հիմները:

Ելույթ է ունենում Ա. Քոչինյանը, որն իր ճառի մեջ խոսելով Սարդարաբադի հերոսամարտի դերի ու նշանակության մասին, ասում է. «Սարդարաբադի ճակատամարտը տարերայնորեն պայքարի ելած ժողովրդական մասսաների անձնազոհության և խիզախության փայլուն արտահայտությունը հանդիսացավ: Այն ժամանակ այս դաշտում կարծես թե հավաքվել էր ամբողջ հայ չարքաշ ժողովուրդը: Կյանքի գնով հաղթանակի հասնելու պատրաստ մարտիկների կողքին կանգնել էին ծերեր, երեխաներ, կանայք, դեռատի աղջիկներ:

Սարդարաբադի հերոսամարտը անջնջելի տառերով է գրված հայ ժողովրդի պատմության մեջ: Դա համաժողովրդական մի կռիվ էր պատվի ու գոյության համար»:

Այնուհետև ելույթ են ունենում շինարար բանվոր Հ. Մանուկյանը, գրող Ն. Զարյանը, Նոր Արմավիրի կոլտնտեսության վարչության նախագահ Ն. Սիմոնյանը և հերոսամարտին մասնակից զինվորներ:

Ապա միտինգի մասնակիցները ուղղվում են դեպի հուշարձանի մուտքը: Ա. Քոչինյանը կտրում է կարմիր ժապավենը, որից հետո ծովածավալ բազմությունը շարժվում է դեպի կոթողները:

Ի թիվս բազմահազար հանդիսատեսների հուշարձանի բացմանը ներկա էին նաև Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը:

Առաջին հայացքից մեզ զարմացրեց այն հսկայական աշխատանքը, որը կատարված էր յոթն ամիսների մի սեղմ ժամանակամիջոցում:

Զբոսայգի-հուշարձանը կառուցված է հենց հերոսամարտի վայրում: Նրա հեղինակներն են ճարտարապետ Ռ. Իսրայելյանը, քանդակագործներ Ա. Հարությունյանը, Ա. Շահինյանը, Ս. Մանասյանը: Այն զբաղեցնում է մոտ 25 հեկտար տարածություն: Առաջին պլանի վրա գտնվում է հուշարձանի մուտքը՝

Հուշարձանի բացման օրը



Մուտք դեպի զբոսայգի—հուշարձան

երկու տիտանական ցուլեր, որոնք խորհրդանշում են այն ուժը, որն ունի այսօր վերակենդանացած հայ ժողովուրդը: Քիչ հեռվում 35 մետրանոց կամարավոր զանգակատունն է՝ վտանգի պահին մեր ժողովրդի ունեցած զգոնության խորհրդանիշը: Զանգակատնից դեպի ձախ, մոտ 200 մետր հեռավորության վրա, կառուցված է 55 մետր երկարություն ունեցող կիսակոր պատը՝ Սարդարաբադի հերոսամարտի հաղթանակը խորհրդանշող քանդակներով: Հուշարձանը կառուցողներին մտահոգել է նաև այցելուների հանգիստը: Պատի կենտրոնում բացված կամարակապ մուտքը առաջնորդում է դեպի ճաշարան-հյուրանոցի շենքը, որը կառուցված է հայ հին ճարտարապետության ոճով: Այս կառույցից դեպի աջ գտնվում է ջրավազանը, որը նույնպես հանդիսանում է հանգստավայր այցելուների համար:

Թող այս զբոսայգի-հուշարձանը խորհրդանշի ժողովրդի խորին հարգանքը նրանց նկատմամբ, ովքեր հերոսաբար ընկան Սարդարաբադի անհավասար ճակատամարտում: Նրանց հիշատակը միշտ վառ կմնա երախտապարտ ժողովրդի սրտում, գալիք սերունդների սրտում:

Սարդարաբադի ճակատամարտը խորհրդանշող որմնանկարներ